ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ստորև ներկայացված են ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառվող ապահովագրական հատուցումների հաշվարկման օրինակներ, բացատրություններ:

Ինչպես գիտենք, ԱՊՊԱ-ի գծով ապահովագրական գումարի առավելագույն մեծություններն են՝

1. անձնական վնասների դեպքում՝
   - Մեկ պատահարով բոլոր տուժողների համար 33 մլն. ՀՀ դրամ,
   - Մեկ պատահարով մեկ տուժողի համար՝ 3.3 մլն. ՀՀ դրամ,
2. գույքային վնասների դեպքում՝
   - Մեկ պատահարով բոլոր տուժողների համար 18 մլն. ՀՀ դրամ,
   - Մեկ պատահարով մեկ տուժողի համար՝ 1.8 մլն. ՀՀ դրամ,

Անկախ այն հանգամանքից, թե որքան են կազմում ավտովթարի հետևանքով տուժողին պատճառված անձնական և գույքային բնույթի վնասները՝ տուժողին հատուցում կարող է տրվել ոչ ավել, քան ԱՊՊԱ պայմանագրում նշված ապահովագրական գումարը:

Օրինակ՝

Ենթադրենք տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով վնասվել է 4 ավտոմեքենա՝ ներառյալ մեղավոր վարորդի ավտոմեքենան: Մեղավորություն չունեցող մյուս 3 վարորդների մեքենաների վնասի չափերն են՝

1. 1,500,000 մլն. դրամ
2. 2,000,000 մլն. դրամ
3. 2,500,000 մլն. դրամ

Ընդհանուր վնասը կազմել է 6,000,000 դրամ:

Քանի որ մեկ պատահարով մեկ տուժողի համար ապահովագրական հատուցման առավելագույն գումարը սահմանված է 1,800,000 ՀՀ դրամ, ապա միայն այդքան գումարի սահմաններում կարող է կատարվել հատուցում:

Այսպիսով, յուրաքանչյուր տուժողին վճարվող ապահովագրական հատուցման չափը համապատասխանաբար կկազմի՝

1-ին մեքենա՝ 1,500,000 ՀՀ դրամ

2-րդ մեքենա՝ 1,800,000 ՀՀ դրամ

3-րդ մեքենա՝ 1,800,000 ՀՀ դրամ